

4582

9(47.925)

3-81

Fungus 1912





Գրագիր հայոց պատմությանը.

ԱՐԺԱՎՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԻԵԼԸ  
ՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՒՄ

Գրքի 20 Գ.

Գրքի  
Ս. ԻԲՁԲԱՇԵԱՆԵ.

Очеркъ Армянской Исторіи  
АРШАКІДИ въ Арменіи

Соч.  
С. Юзбашянъ.

БАКУ  
ТИП. „АРАМАЗДЪ“  
1912 г.



Р. Ա. Գ. Ո. Ի  
Տպարան „ԱՐԱՄԱԶԴ“  
1912 թ.



9(47.925)

30h-81

28

Գրագ հայոց պատմութիւնից.

ԱՐՏԱԿԱՆԻԿԱՆ ՀԱՅՏԵՏԻԿԸ ՀԵՅՈՑ ԵՐԿՐԱԿԻ

Очеркъ армянской исторіи

АРШАКИДИ въ Арменіи

1007  
34102

8

Գրեց

Ս. ԻԻԶԲԱՇԵԱՆ.

Соч.

С. Юзбашьянъ.

12004

БАКУ  
ТИП. „АРАМАЗДЪ“  
1912 г.



Բ Ա Դ Ո Ւ  
Տպարան „ԱՐԱՄԱԶԴ“  
1912 թ.



Հայոց աշխարհը 4 թագաւորական տոհմ է ունեցել՝ այն է Հայկազանք կամ Հայկազունիք, Արշակունիք, Բագրատունիք և Ռուբինեանք. այս վերջին տոհմը բուն հայոց աշխարհում չը-  
թագաւորեց, այլ նրանից դուրս՝ Կիլիկիայում։  
Հայկազանց վերջին թագաւորն էր Վահէն, որը  
գտնուում էր պարսից արքայից արքայ Դարեն  
կողմանոսի իշխանութեան տակ. այս ժամանակ  
յայտնի աշխարհակալ Աղեքսարդը-Մակեդոնացին  
պարսից տէրութեան վրայ եկաւ, որի պատճա-  
ռով Վահէն 50,000 ոտաւոր և 7,000 ձիաւոր  
զօրքով Դարեն կողմանոսին օգնութեան գնաց։

Արեւելա քաղաքի մօտ, 330 թւականին,  
Քրիստոսի ծննդից առաջ ճակատամարտ եղաւ, ուր  
Աղեքսանդր-Մակեդոնացին յաղթեց պարսից թա-  
գաւորին և տէր տարձաւ նրա տէրութեանը ու  
Հայաստանի հարաւային և արեւմտեան մասերին։  
Այս պատերազմի մէջ սպանւեց Վահէն և նրա  
մահով վերջացաւ ՀԱՅԿԱԶՈՒՆԻ կամ ՀԱՅԿԱ-  
ԶԱՆՑ թագաւորութիւնը։

Այդ օրից սկսած 30 տարի հայերը մնացին մա-  
կեդոնացոց իշխանութեան տակ. սրանից յետոյ,  
երբ մեռած էր Աղեքսանդր Մակեդոնացին,  
— նրա թողած երկրները խլիւլեցան և բաժան-  
բաժան եղան սրա-նրա մէջ։ Այդ ժամանակ  
հայերը իրանց սահմանակից ազգերի հետ սելև-



կեան թագաւորներին բաժին ընկան:

Սրանց տիրապետութիւնը հայերի վրայ տեւեց մօտ 90 տարի, երբ Արտաշիս անունով մի քաջ ու ճարպիկ հայ իշխան տեսնելով թէ ինչպէս սեւեկացիք յաղթեցան թշնամիներէց, — ինքն էլ նրանց դէմ դուրս եկաւ, յաղթեց և ազատութիւն ձեռք բերաւ: Արտաշիսը մեծ հոգ տարաւ ծաղկեցնելու Հայաստանում երկրագործութիւնը, արեւստները և վաճառականութիւնը, այս պատճառով էլ շատ սիրելի դարձաւ իր ժողովրդին:

Երկար ժամանակ այսպէս խելացի կերպով իր աշխարհը կառավարելուց յետոյ նա մեռաւ և տեղը թողեց անշնորհք և անարժան Արտաւազդ որդուն, որի ժամանակ հայերը ձանձրացած իրանց անհաստատ դրութիւնից, 150 թւակա-նին քրիստ. առաջ, դիմեցին Պարթևաց Արշակ թագաւորին, որ իրանց երկրին տէրութիւն անի:

Պարթևները մի փոքր ժողովուրդ էին այդ ժամանակ. նրանց Արշակ Զ թագաւորը իր քաջութեան և մարդասիրութեան շնորհիւ այնքան ուժեղացաւ, որ յաղթեց՝ սեւեկացիներին և պարսից թագաւոր դարձաւ:

Արշակ Զ. լսելով հայոց այս առաջարկը — անչափ ուրախացաւ, որովհետեւ Հայաստանի նման մի հարուստ և ուժեղ երկրին տէր դառնալուց

պատ նա այստեղ մի ուրիշ մեծ օգուտ էլ ունէր. — այդ ժամանակ Սեւեկացոց թագաւորութիւնը, որը զբաղւում էր նրա իշխանութեան տակ, — դէռ էլի-կենդանութեան նշաններ էր ցոյց տալիս. ուստի վաղ, թէ ուշ մի վտանգաւոր թշնամի պիտի դառնար նա պարթևաց տէրութեան համար. իսկ Հայաստանը ընկնելով սեւեկացոց և պարթևաց երկրների մէջ — մի ապահով և զօրեղ պարբնակ պիտի լինէր Արշակ Զ-ի և նրա յաջորդների համար: Այս բանը աչքի առաջ ունենալով՝ Արշակ Զ-ը իր եղբայր Վաղարշակին հայոց թագաւոր ուղարկեց և ցանկացաւ, որքան կարելի է ուժեղացնել այս նոր Արշակունի թագաւորութիւնը:

Նա վաղարշակի իշխանութեանը յանձնեց բացի Մեծ ու Փոքր Հայաստաններից և հետեւալ երկրները. — այն է՝ Ատրպատականի, Ասորեստանի և Միջագետքի մի մասը, որոնք ընկնում են հայոց աշխարհի արեւելեան և հարաւային կողմերը. իսկ հիւսիսային կողմից Հայաստանին միացրեց Սև ու Կասպից ծովերի արանքը գտնւած երկրները, որոնք են՝ Եգիպտոս, Վրաց, Աղանից, Սկիւթացոց և Կասպից աշխարհները: Ապա նա քաջալերելով Վաղարշակին — առաջ. „Ընդարձակիր աշխարհիդ սահմանները ինչքան կարող ես, որովհետեւ քաջերի սահմանը իրանց գէնքն է միայն“:

Հայոց աշխարհը հիւսիսային կողմից այսպէս



ընդարձակելով՝ զօրացաւ մեր ազգեցութիւնը մեր ցեղակից վրացիներէ վրայ: Վաղարշակի թագաւորելուց յիսուն տարի յետոյ այս ազգեցութիւնը էլ աւելի զօրացաւ, երբ մի Արշակունի իշխան դուրս արաւ Վրաստանից Փառնաւազեան տոհմի վերջին թագաւոր Փառնաւազին և այնտեղ մի նոր Արշակունի թագաւորութիւն հիմնեց:

Վաղարշակը ստանալով իր մեծ եղբայր Արշակ Զ-ից այսչափ ընդարձակ տեղի իշխանութիւնը—Հայաստան մտաւ և այնտեղ Արշակունի թագաւորութեան հիմը դրաւ 149 թւականին Քրիստոսի ծննդից առաջ:

Այս միջոցներին էր, որ Փոքր Ասիայում բնակող խաղտիացի, լազգիացի, պոնդացի, կապադովկացի և փոխգացի ժողովուրդները խօսք մէկ արին և Վաղարշակի գէմ կռիւ դուրս եկան Կապադովկիայի Մորփիւղիկէս իշխանի առաջնորդութեամբ, որպէսզի հայոց նոր թագաւորին պցեն իր գահից և իրանք տեղը բռնեն. բայց Վաղարշակը իսկոյն և ետ ցոյց տւեց, որ ինքը քաջ և ճարպիկ կառավարիչ է: Նա շտապով ընտիր զօրքեր հաւաքեց ամեն կողմերից, առաջ արշաւեց, անցաւ Մեծամօր (Սև ջուր) գետի ափունքով գետի Արաքսի սփը և բանակ դրեց հայոց հին մայրաքաղաք Արմաւրի բլրի մօտ: Այստեղ նա սպասեց երկար—որպէսզի զօրքին վարժեցնի,

քանի որ նրանք տեղեակ չէին ոչ մի զինւորական կարգի:

Յետոյ դիմեց արեւմտահիւսիսային կողմը—գէպի Փոքր—Հայք, ուր Կոլոնիա անունով մի բարձր բլուր կայ:

Այս բլրի մօտ հայոց և մորփիւղիկէսի զօրքերը գէմ առ գէմ բանակ դրեցին և երկար սպասեցին առանց կռիւի դուրս գալու:

Պատերազմը սկսեց հայերի կողմից: Մորփիւղիկէսը, որը մի յաղթանդամ և անվախ սրբտի տէր մարդ էր,—կարգի դրեց իր զօրքը և վերցնելով մի խումբ կտրիչներ, շատ յանդուգն կերպով հայոց վրայ յարձակեց. նա հագել էր երկաթէ և պղնձէ զրահներ, այս պատճառով էլ շատ հարւածներ նրա վրայ չէին ներգործում. հայոց քաջերից շատերին գետին գլորելով նա մօտեցաւ Վաղարշակին և նետը գէպի նա արձակեց. բայց վրայ հասան հայ զօրքից քաջ և անուշով տղամարդիկ, Մորփիւղիկէսի հարւածի գէմն առան իրանց զրահներով և նրան գետին գլորեցին:

Տեսնելով իրանց առաջնորդի անկումը,—Մորփիւղիկէսի զօրքերը սարսափահար յետ դարձան և մեծ կոտորած կրելով փախչել սկսան:

Այս յաղթութեամբ բոլորովին ապահովեց Վաղարշակի նորահաստատ տէրութիւնը և նրա իշխանութիւնը տարածեց շրջակայքի ազգերի



վրայ:

Այնուհետև Վաղարշակի գլխաւոր հոգան է լինում իր տէրութեանը հաստատուն և խելացի կարգեր նշանակելը, որոնցով նա կամենում էր իր երկրի ապագան ևս անխախտ հիմքերի վրայ դնել:

Իւր հակառակորդ Մորփիւղիկէսի վրայ տարած յաղթութիւնից յետ դառնալիս իր աշխարհի հիւսիսային կողմերում հանդիպում է նա մայրի խիտ անտառների ընդարձակ տարածութեան, ուր մարդկային բնակչութիւն խիտ սակաւ է լինում. այս տեղերում նա շինել է տալիս ամառանոցներ, մեծ-մեծ գոմեր և որսատեղեր, ուր նետաձգութեան էին վարժւում արքայորդիներն իրանց շքախմբերով: Դէպի հարաւ գալով, պատահում է տօթ և սակաւաբնակ դաշտավայրերի, որոնց օդը բարեխառն գարձնելու համար պարտէզներ և այգիներ է տնկել տալիս: Ապա հաւաքում է հիւսիսային երկրներից՝ սկսած Կովկասի լեռներից վայրենի բազմաթիւ ցեղեր և բնակեցնում է նրանց այս երկրներում՝ պատւիրելով, որ թողնեն իրանց սովորական աւագակութիւնն ու մարդասպանութիւնը, տէրութեան օրէնքներին հնազանդ լինին և պատւաւոր աշխատանքի նւիրւին:

Սրանից յետոյ նա խելացի վերակացուներ է նշանակում նրանց վրայ, և ինքը անցնում

դէպի Այրարատ աշխարհը: Մեծամօր գետի ափին Կանգ առնելով՝ այնտեղի գօրքերը կարգի է դնում և սրանց վրայ էլ վերակացուներ նշանակելուց յետոյ իր մեծամեծների հետ գնում է Միջագետք: Այստեղ նա իր գահը հաստատում է մշտապէս Մծբին քաղաքում, որպէսզի մօտ լինի իր եղբայր Արշակի տէրութեանը և Սելկացոց ու ամեն—մի քաղաքական գործի մասին տեղն ու տեղը տեղեկանայ:

Այնուհետև նա ձեռք է զարկում հայաստանի խախաւած օրէնքներն ու կարգերը վերահաստատելուն և լրացնելուն. սրանից զատ՝ ցանկանում է իմանալ՝ թէ ինչպիսի մարդիկ են եղած Հալաստանի հին թագաւորներն ու իշխանները, որոնց հիմա ինքը լաջորդում է. — արդեօք քաջ են եղել նրանք և անւանի, թէ վախկոտներ և արհամարաճներ. բայց այս հարցերի վերաբերեալ ոչ մի գրութիւն նա չի գտնում հայոց աշխարհում, բացի ժողովրդի մէջ եղած հատ ու կտոր երգերից և աւանդութիւններից, որոնց մէջ մութ կերպով և առասպելախառն խօսւում է այս կամ այն թագաւորի ու իշխանի գործերից: Սրանք. իհարկէ, բաւարարութիւն չէին կարող տալ հարցասէր Վաղարշակին, որի պատճառով էլ նա գտնում է մի ասորի գիտնական մարդու ՄԱՐ-ԱՅԱՍ անունով, որը հմուտ էր յունաց և քաղղէացոց լեզւին ու զբաղանութեան և



Թղթով ուղարկում իր եղբայր Արշակի մօտ-  
գանգատելով հայոց աշխարհի գրութիւնից,—  
այսպիսի խօսքեր է նա գրում Արշակին.—, Այս-  
տեղ ոչ մի կարգ ու կանոն չեմ գտած, ոչ  
մեծն է նկատուում և ոչ փոքրը—ամեն ինչ  
խառնի-խուռն և վայրենի գրութեան մէջ է. իսկ  
դու ինձ այստեղ ուղարկելիս պատէր տւեցիր,  
որ քաջութեամբ և իմաստութեամբ հոգ տանեմ  
այս երկրին.— ես կատարեցի իմ պարտքը-որքան  
ուժերս թոյլ տւեցին. բայց հիմա հարկաւոր է  
ինձ իմանալ այս ազգի նախնիքների և օրէնքնե-  
րի մասին հաստատուն տեղեկութիւններ, որպէսզի  
նրանց համաձայն ես շարունակեմ իմ ապագայի  
բարեկարգութիւններս. ուստի դիմում եմ քեզ  
չ'մերժես քո եղբօր և զաւակի խնդիրը—բաց  
անեա քո դիւանը այս մարդու առաջ, որտեղից  
նա քաղէ հայոց ազգին վերաբերեալ պատմական  
կտորները և ինձ բերէ:

Արշակ շատ ուրախացաւ՝ իմանալով իր եղ-  
բօր այս մտքերը և բաց արեց Նինւէ քաղաքի  
իր արքունական գիւանատունը Մար-Աբասի  
առաջ, ուր գտաւ նա հին ազգերի պատմութիւ-  
նը պարունակող մի մատեան. այս մատեանի  
բնագիրը դրած էր քաղղէացոյ լեզուով, որը Աղէք-  
սանդը—Մակեդոնացին թարգմանել էր տւել  
յունարէն. այստեղից Մար—Աբասը քաղեց հայ-  
կական իշխանութեանը վերաբերեալ կտորները

և Վաղարշակին բերեց, որը անշափ ուրախացած  
իր ամենատաղիին գտնած համարեց այն և իր պա-  
լատի մէջ մեծ զգուշութեամբ պահեց: Այս պատ-  
մութեան մի մասն էլ փորագրել տւեց արձան-  
ների վրայ, որպէսզի նրանք յաւիտեանս անկո-  
րուստ պահպանւին:

Ապա հայոց հին սովորութիւնները իրան  
հիմք ընդունելով,—բարեկարգութիւնները սկսեց  
նախարարական և իշխանական տներից:—Հայոց  
աշխարհը այս միջոցին բաժանւած էր հարիւրա-  
ւոր մասն իշխանութիւնների մի-մի իշխանի կամ  
նախարարի գլխաւորութեամբ: Նրանցից շատերը,  
համարեա, անկախ էին համարում իրենց թագա-  
ւորական իշխանութիւնից և իրանց սեփական  
զօրքը ունէին:

Շատ անգամ նրանք ապստամբում էին իրանց  
թագաւորների դէմ և միանալով արտաքին թշա-  
միրների հետ՝ քար ու քանդ էին անում իրենց  
աշխարհը. այս չարիքին դիմադրելու նպատակով  
Վաղարշակը պալատական մի շարք պաշտօններ  
սահմանեց, որոնցից իւրաքանչիւրը մի-մի նա-  
խարարութեան յանձնեց. այս ձևով նա իր ար-  
քունիքի հետ կապեց այդ նախարարութիւննե-  
րին և նրանց իրաւունքի տակ եղած ժողովըրդնե-  
րին ճանաչեցնել տւեց թագաւորի կեարոնական  
ուժը: Ամենամեծ պատիւներից մէկը նա շնոր-  
հեց Բագրատ իշխանին, որը ամեն ժամանակ



աչքի էր ընկել իր քաջութեամբ և հաւատարմութեամբ.— նրան յատկացրեց Արշակունի թագաւորների զլիւին թագ զընելու և զօրքի վրայ ժառանգաբար սպարապետ լինելու իրաւունքը, բացի այս թոյլ տւեց արքունի պալատում երեք տակէն վարսակալ դնել զըլիւին, որը ամենամեծ պատւի նշանն էր. նրա ցեղին էլ իր անունով բազմատունի անւանեց:

Մարաց գաղթականութեան նախարարին, որը հայոց հին իշխան Աժգահակի ցեղիցն էր,— թագաւորից յետոյ երկրորդ գահը ունենալու պատիւը շնորհեց: Գնթունեանց ցեղին նշանակեց արքունի գանձապահ և զգեցնող. Գնունեաց ցեղին՝ տակառապետ և թագաւորի սեղանի համար ընտիր խմիչքներ պատրաստող. Գաբեղէնից ցեղին՝ արքունի մատակարար. Արեղէնից ցեղին՝ սպասաւոր. Վարաժնունեաց ցեղին՝ որսերի վերակացու. Արծրունեաց ցեղին՝ թագաւորի առաջից սրժէնշան դրօշակներ տանող: Մինչև անգամ արքունի զինարանների, ամարանոցների ու հաւանոցների վրայ էլ առանձին-առանձին իշխան նշանակեց, որոնցից ամեն մէկը նախարարական պատիւ ունէր և համարւում էր „սպարս“ — այսինքն՝ ազնւական:

Ահա այսպիսի շատ պաշտօններ սահմանեց Վաղարշակը և բաժանեց Հայաստանի աչքի ընկնող տոհմերի մէջ:

Այս տոհմերը, ընդհանրապէս, օտարազգիներ էին, որոնք զանազան ժամանակներում ինքնակամ Հայաստան գալով և կամ գերելով Հայկազանց թագաւորներից,— նրանց ձեռքի տակ շատ քաջագործութիւններ էին կատարել և հաւատարմութիւն ցոյց տւել,— որոնց պատճառով էլ մեծամեծ պատիւներ և նախարարութեան աստիճան էին ստացել նրանցից: Վաղարշակ մտածեց, որ միայն այս օտարազգի տոհմերին առաջ քաշելով— կարող է հայ ազգի սրտում կասկած զարթեցնել դէպի իր անձը.— ուստի այս պատճառով սկսեց առանձին ուշադրութեան արժանացնել Հայկազանց ցեղից մնացած մի արժանացնել Հայկազանց ցեղից մնացած մի քանի տոհմերին:— Խոսիւողունեաց տոհմին, որոնք խոս Հայկազն Նահապետի ցեղից էին — իրեն համար թիկնապահներ նշանակեց. Արքունի դրան պահպանութեան համար էլ չորս դունդ կազմեց Հայկազանց թագաւորների ցեղից: Իւր կանանց պահպանութիւնը յանձնեց ներքինիների, որոնց վրայ նոյնպէս մեծ նշանակեց Հայկազանց ցեղի Հայր իշխանին. Այս իշխանին անւանում էին Հայր—Մարգպետ, որի պաշտօնն էլ կոչւում էր ժարգպետութիւն. բացի կանանց պահպանութիւնից և ներքինների վրայ իշխելուց, Հայր—Մարգպետը համարւում էր թագաւորի հայր և նրա պալատի հաղարապետ:

Վաղարշակ հոգ աւարաւ կարգի տակ զնելու



և հայոց հին աստուծոները, — այն է՝ կուռքերի պաշտամունքը: Կուռքերի սպասաւորը կոչուում էր ֆուրմէր, իսկ պաշտօնը՝ քրմութիւն, որը շատ յարգի էր ժողովրդի մէջ: Վաղարշակ այս պաշտօնը յանձնեց նոյնպէս հայ տոհմի, որը հայոց սիրելի դիւցազն Վահագնի ցեղից էր համարուում և նրա անունով էլ կոչուում էր փահումի: Հայաստանի հին մայրաքաղաք Արմաւիրն էլ սուրբ քաղաք դարձրեց՝ շինել տալով այնտեղ կոստաներ, ուր կանգնեցրեց արեւի ու լուսնի և իր նախնիքների — այն է, պարթևաց արձանները:

Այս բոլորից յետոյ Վաղարշակը իր ուշք ու միտքը դարձրեց՝ երկրին քաղաքական և զինւորական օրէնքներ սահմանելու վրայ:

Այստեղ նա նոյնպէս օգտւեց Հայկազանց թագաւորների սովորութիւններից, որոնց նա մշակեց և լրացրեց. ինչպէս Հայկազանց ժամանակին էր — հիմա էլ, երկրի չորս կողմը նա ուժեղացրեց սահմանապահ զօրքերով, որովհետեւ Հայաստանը չորս կողմից միանում էր գրացի երկրներին հարթ դաշտերով և ծովերով:

Հարաւ արեւելեան սահմանի վրայ նա դրեց 12,000 զօրք Վաղմոսի ցեղից. արեւելք — հիւսիսային կողմը՝ Կուր գետի վերին հոսանքի մօտերը նշանակեց Սիսակեան ցեղին Սուան իշխանի դեկավարութեամբ, որը հայոց մէջ առաջին մարդն էր համարուում թէ որպէս պատերազմող և թէ

որպէս հնարագէտ խորհրդական: Հիւսիսային կողմից՝ Կովկասեան լեռների դիմացը նշանակեց Գուգարաց բզեշխին իր բազմաթիւ և ուժեղ ցեղի հետ. հարաւային կողմը յանձնեց Աղձնեաց բզեշխին, արեւմտեանը՝ Անգեղ տոհմին:

Սահմանների ուժեղացման հարցը այս-կերպ վերջացնելուց յետոյ, նա ձեռք զարկեց երկրի ներսը օրէնքներ հաստատելու. ամբողջ երկիրը բաժանեց մեծ ու փոքր նախարարական տոհմերի ու իշխանների մէջ և ապա ամեն — մի քաղաքում ու աւանում դատաւորներ դրաւ: Յետոյ, ամենքին ցոյց տալու համար՝ թէ ինքը ճշգրտաւ յարգում է արդարութիւնը — իր պալատում երկու մարդ նշանակեց, որոնցից, մէկը պէտք է յիշեցնէր նրան իր աշարդար վճիռը անմեղ մարդկանց վրայ, իսկ միւսը՝ միտքը զցէրյանցաւորին պատժելու: Իսկ որպէսզի ամեն — մի գործ առաջ տանէ կարգապահութեամբ և օրինակ դառնայ իր ստորագրեալներին, նա նշանակեց առանձին ժամեր ընդունելութեան, խորհրդի և զբօսանքի համար: Զինւորականութեան մէջ նոյնպէս հաստատեց որոշ կարգ՝ նշանակելով առաջին, երկրորդ, և այլ աստիճաններ:

Գահաժառանգութեան համար էլ դրաւ մի այսպիսի օրէնք. — միայն թագաւորի անդրանիկ որդին պէտք է համարուէր հօր օրինաւոր յաջորդ և պէտք է մինչև մահ ընակէր արքունի-



քում. Իսկ միւս որդիները, որպէս արքայացեղ իշխաններ՝ պէտք է գնային Հաշտենից գաւառը և ապրէին այնտեղ արքունիքից ստացած կենսաթոշակով:

Ահա սրանք են Վաղարշակի սահմանած քաղաքական և զինուորական կարգերը, որոնք կառավարութեան հիմք դարձան նրանից յետոյ եկող Արշակունի և Բագրատունի թագաւորների համար. իսկ Ռուբինեան թագաւորութեան ժամանակ այս կարգերը մասամբ միայն գործադրւեցան:

Վաղարշակը մեռաւ 22 տարի թագաւորելուց յետոյ՝ 127 թւականին Քրիստոսի ծննդից առաջ:

Վաղարշակին յաջորդում է իր անդրանիկ որդի Արշակ Ա-ը, որը շարունակ արքունիքումն էր ապրել՝ համաձայն զահաժառանգութեան համար սահմանւած օրէնքի:

Արշակ Ա-ի գործերի վերաբերեալ շատ քիչ տեղեկութիւններ է գրում մեր պատմահայր Մովսէս Նորենացին: Այս բանի պատճառը, անշուշտ, այն երևոյթը պետք է համարել, որ այդ ժամանակ Հայաստանի գրացի ազգերը արդէն նւաճւած լինելով՝ նրան պատերազմ գուրս գալու առիթներ չաւին. ուստի Արշակ թագաւորը իր 13 տարւայ իշխանութիւնը գործ գրեց միմիայն երկրի բարեկարգութեան վրայ և հօր

սահմանած օրէնքները աւելի զարգացրեց: Նա մէկ անգամ միայն պատերազմի դաշտ գուրս եկաւ՝ պոնդացոց ապստամբութիւնը զսպելու հնազանդեցնելով սրանց, նա սև ծովի ափին մի արձան կանգնեցրեց և իր նիզակը ուժով նրա մէջ խրեց. այս արձանը երկար ժամանակ սրբի տեղ պաշտեցին պոնդացիները՝ նրան համարելով աստուածների ձեռքով շինւած: Բայց երբ Արշակի որդի Արտաշէսը միւս անգամ պատերազմելու գնաց պոնտացիների դէմ—նրանք զայրանալով այս արձանը ծովը ձգեցին:

Արշակ Ա մեռնում է 114 թւականին, իր աթոռը թողնելով հպարտ և պատերազմասէր Արտաշէս Ա-ին:

Արտաշէս Ա-ը մանուկ հասակից շատ ժիր էր և ուժեղ, ուստի բոլորին կարծեցնել էր հալիս, որ նա ապագայում մեծ գործեր պիտի կատարէ: 114 թւականին նստելով Արշակունիների գահին—նա դժբաղտաբար, պապի և հօր նման հոգ չ'տարաւ երկրի ներքին բարեկարգութեան վրայ, որը իւրաքանչիւր կառավարչի ամենամեծ զործը պիտի համարել. այլ ամբողջապէս տարւեց աշխարհակալական մըտքերով. այս բանը երեւում է նրա թագաւորութեան առաջին օրերից, երբ նա չուզեցաւ պարթևաց թագաւորութեան երկրորդը համարւել, այլ ստիպեց իր ազգական Արշականին հրաժարուել առաջնութիւնից:



Արշականը վախենալով Արտաշէսից-տալիս է նրան առաջնութիւնը: Այնուհետեւ Արտաշէսը պարսից երկրում իր համար առանձին պալատ շինեց և իր պատկերով դրամ էր կտրում:

Որպէս սիրահար զինւորական արւեստի՝ նա իր Տիգրան որդուն զինավարժեցրւել յանձնեց վարած անունով մի քաջ նետածիգ զինւորի, որին արքունական որսատեղերի վրայ իշխան նշանակեց և Հրազդան գետի ափերին գտնւած գիւղերից մի քանիսը բաշխեց: Ապա Տիգրանին թագաւոր նշանակեց Այրարատեան աշխարհի վրայ իր կենդանութեան ժամանակ:

Այս բոլորից յետոյ նա իրեն զաշնակից գտաւ Պոնտոսի թագաւոր քաջ Միհրդատ Ե Եւպատորին, որին յանձնեց Կովկասի ու Սև ծովի երկրների իշխանութիւնը և իր ազնիւ Արտաշամային էլ նրան կնութեան տաւ: Յետոյ իր երկրի հիւսիսային և արևելեան կողմերից հաւաքեց զինւորների մի այնպիսի բազմութիւն, որոնց թիւը համարանքով իմանալ անհնարին էր. — այնպէս որ եթէ նրա զինւորները միաժամանակ մի-մի նետ արձակէին — նրանք թանձր ամպի նման կը ծածկէին արևի իրեսը:

Այսչափ բազմութեան զլուխն անցած՝ նա զիմեց յունաց աշխարհի վրայ: Փոքր-Ասիայի թագաւորութիւններին մէկ-մէկու յետեից տիրելով՝ Միշերկրական ու Սև ծովերը ծածկեց

պատերազմական նաւերով, Թրակիայից անցաւ Բէստրա, յաղթեց սպարտացոց Մորէայում և ամբողջ Ելլադայի վրայ այնպիսի ահ ու սարսափ տարածեց, որ նրա յաղթութիւնների լուրը հռովմայեցոց ականջը հասաւ. բայց այս միջոցին հռովմայեցիք զբաղւած էին պատերազմով, ուստի ժամանակ չունեցան դէմ դրնելու Արտաշէսին: Նրանք ազատւելու ուրիշ ճար չունենալով-կաշառեցին Արտաշէսի զինւորներին, որոնք սոսկալի ազմուկ և իրաբանցում սարքելով-սպանեցին իրանց աշխարհակալ թագաւորին 89 թւականին Քրիստոսի ծննդից առաջ:

Հպարտ և պատերազմասէր Արտաշէսը վերջին շունչը փչելիս մտաբերից իր 25 տարւայ անցկացրած փառքը և արտասւելով բացականչեց — «Ափսոս իմ անցած փառքիս»:

Հօր մահւան լուրն տոնելուն պէս — Տիգրանը իրեն թագաւոր հրատարակեց նրա փոխարէն և իսկոյն հաւաքելով ցրւած զօրքերին — դուրս եկաւ յունաց դէմ, որոնք անցել էին Հայաստանի սահմանը:

Նա հօր նման անվախ և պատերազմասէր վրնելով, մանկութիւնից էլ վարժեցրւել զինւորական կարգերի, — կարողացաւ առանց որևէ մի դժւարութեան ցրւել յունաց զօրքը և իրանց երկիրը հալածել. ապա տիրեց ամբողջ Փոքր-Ասիային, որտեղից յետ դառնալով Կեսարիա



քաղաքը՝ իր դաշնակից և փեսայ Միհրդատին յանձնեց բազմաթիւ զօրք և Կապադովկիայի ու ամբողջ Փոքր Ասիայի իշխանութիւնը՝ պատուիրելով նրան, որ հսկէ այս երկրների վրայ և թոյլ չը տայ նրանց գլուխ բարձրացնելու իրենց դէմ:

Այս կարգադրութիւնը անելուց յետոյ նա անցաւ Հայաստան. երբ հասաւ Արաքս գետի ափ—այստեղ նրա դէմ դուրս եկան պարթևաց զօրքերը իրանց Արշական թագաւորի առաջնորդութեամբ:

Արշականը լսելով Արտաշէսի մահւան լուրը —շտապել էր ջախջախելու Տիգրանի ուժը և այսպէսով վրէժ լուծել նրա գոռոզ հայր Արտաշէսի վարմունքից ու կրկին նախագահութիւնը ձեռք բերել:

Պատերազմն սկսւեց, ուր պարթևները չափաւոր յաղթեցան, Արշականն էլ սպանւեց մի թրակիացի զինուորի ձեռքով: Այս յաղթութեամբ Տիգրանը Ասիայի ամենագօրաւոր թագաւորը դարձաւ և իր իշխանութեան տակ առաւ այնտեղի բոլոր աչքի ընկնող տէրութիւններին:

Այսպիսի յաջողութիւնից ոգի առած՝ նա ուզեց չաստեղծներին—այսինքն—կուռքերի սիրտը շահած լինել, որպէսզի նրանք մշտապէս յաղթութիւն պարգևեն իրան:

Ուստի հայոց աշխարհի զանազան մասերում

նոր կռասներ շինել տւեց և չաստեղծների պատկերները այնտեղերում կանգնացնելով—հրամայեց իր բոլոր նախարարներին զոհ բերել կուռքերին և ծունկ չոքել նրանց առաջ: Միայն Բագրատունի Բագրատ իշխանը չուզեց կատարել թագաւորի այս հրամանը, որովհետեւ հրէա ազգից լինելով՝ պաշտում էր իսկական Աստծուն:

Տիգրան բռնութիւն գործ չ'ըրեց իւր այս քաջ իշխանի վրայ—թողնելով նրան իրեն կամքին հաստատ:

Այս միջոցներին էր, երբ Տիգրանի համար մէկ ուրիշ կողմից էլ անսպասելի կերպով մի այսպիսի յաջողութիւն եկաւ.—սելևկացոց երկրում ամբողջ ութ տարի մեծ խառնաշփոթութիւն կար.—այնտեղ երկու եղբայր այդ ութ տարւայ ընթացքում շարունակ կռիւ էին տալիս իրար դէմ՝ սելևկացոց թագաւորութիւնը մէկ—մէկու ձեռքից խլել աշխատելով. ժողովուրդը նեղն ընկած և ձանձրացած այսպիսի դրութիւնից՝ վճռեցին մի ուժեղ թագաւորի դիմել, որը գայ իրենց տէրութիւն անի և իրենց երկրի թագաւորական գահին տիրանայ: Նրանք երկար մտածելուց յետոյ՝ ամենից յարմարը Տիգրանին համարեցին և դիմեցին նրան: Տիգրան 85 թւականին անցաւ Ասորոց երկիրը, խռովարար երկու եղբայրներին հալածեց այնտեղից և տէր դարձաւ սելևկեան թագաւորութեան ապա մի իշխանի իրեն



փոխանորդ նշանակեց նրանց Անտիոք մայրաքաղաքում, ու ինքը գնաց Պաղեստին. այստեղից գերեց բազմաթիւ հրէաներ, որոնց միացրեց Կիւիւկիայից և Կապադովկիայից գերի վերցրած յոյներին մի մեծ բազմաթիւն. հրէաներին նա յետոյ բերաւ Հայաստան և բնակեցրեց Արմաւիր մայրաքաղաքում և Վարդգէսի աւանում, որը յետոյ Վաղարշ թագաւորը մեծացրեց և իրան մայրաքաղաք դարձրեց Վաղարշապատ անունով. իսկ յոյներին բնակեցրեց Միջագետքի ընդարձակ դաշտերում:

Այս ժամանակներում Տիգրանը իր փառքի ամենաբարձր աստիճանին էր հասել. նրա իշխանութեան տակ էին գտնւում մարերը, արաբացիք, աղաբենացիք, ատրպատականցիք, վրացիք, աղանները, բաբելացիք և ուրիշ շատ մանր ազգեր: Շատ ազգութիւնների համար էլ նա կարգադրութիւններ էր անում, — օրինակ՝ Կիւիւկեայի և Կապադովկիայի յոյներին, ինչպէս վերը տեսանք, նա զաղթեցրեց Միջագետք. վրանաբնակ արաբացոյ էլ տեղափոխեց իրեն մօտ, և նստակեաց կեանքի վարժեցնելով՝ սկսաւ նրանց ձեռքով վաճառականութիւն անել: Այսպիսով Ասիայի մեծ մասը նրան թագաւորների թագաւոր էր ընդունում:

Հին պատմագիրները գրում են, որ Տիգրանը այդ ժամանակ անքան գոռոզացել էր, որ իր

հպատակ չորս թագաւորի թիկնապահ էր դարձրել իրեն. երբ ձի էր նստում, այդ թագաւորները պետք է նրա երկու կողմից ոտքով գնային. իսկ զան բազմելու կամ մի ուրե է հրաման տալու ժամանակ՝ պէտք իսկոյն և ետ իր առաջը կանգնէին:

Երբ Տիգրանը մէկ—մէկու յետեից տէր էր դառնում անքան ընդարձակ երկրների, — այդ ժամանակ նրանից պակաս քաջութիւններ չարեց Միհրդատը — Տիգրանի փեսան ու դաշնակիցը: Նա երկար պատերազմներ տաւ հռովմայեցոյց մի շարք զօրավարների դէմ և նրանց բոլորին էլ ջարդ տալով՝ դուրս արաւ Փոքր — Ասիայից, ապա մտաւ Յունաստան և այնտեղ էլ մի քանի երկրներ իրիւրով՝ ահ ու սարսափ տարածեց ամեն կողմ: Հին պատմիչները գրում են որ այդ միջոցին Միհրդատի իշխանութեան տակ 22-25 ազգեր կային, որոնց բոլորի լեզուն էլ նա զիտէր և հետները առանց թարգմանի էր խօսում:

Յունաստանում Միհրդատի դէմ ուղարկեցին հռովմայեցիք Սիլլա զօրավարին, որը միայն կարողացաւ յաղթել նրան և մեծ տուգանքի տակ գնելով՝ դուրս արաւ այնտեղից ու յետ դարձրեց հռովմայեցիներին խլած երկրները:

Միհրդատը չ'յուսահատեց այս անյաջողութիւնից. — նա մի — քանի տարի պատրաստու-



թիւն տեսաւ և Տիգրանին էլ յորդորեց, որ գնայ Կապադովկիային տիրէ:

Տիգրանը Փոքր—Ասիայի պահպանութիւնը Միհրդատին յանձնած լինելով՝ մինչև այդ օրը չէր մասնակցել նրա կատարած այս կռիւներին. հիմա լսելով նրա յորդորը—մեծ զօրք վերցրեց և Կապադովկիայի վրայ գնաց, որին տիրել էր Միլլան: Առանց դժուարութեան յետ խլեց նա այս երկիրը հռովմայեցիներէից և 20,000 մարդ գերի վերցնելով,—բերեց իր շինած Տիգրանակերտ քաղաքում բնակեցրեց:

Հռովմայեցիք այս լուրը առելուն պէս—Լուկուլլոս և Կոտտան նշանաւոր զօրավարներին ուղարկեցին Տիգրանի ու Միհրդատի դէմ: Բայց Տիգրան չուզեցաւ մեծ նշանակութեան տալ հռովմայեցի այդ զօրավարներին և անձամբ նրանց դէմ կռւի դուրս գալ, այլ բաւականացաւ այնքանով միայն,—որ Միհրդատին օգնական զօրք տւեց և նրանց դէմ ուղարկեց:

Միհրդատը հիմա էլ կռւեց այնպիսի քաջութեամբ, ինչպէս մինչ այդ օրը կռւել և յաղթել էր հռովմայեցի շատ զօրավարներին:

Կոտտային նա շարդ ու փշուր արաւ, պատերազմական նաւերը այրեց և իրան էլ հռովմայեցոց աշխարհը հալածեց. բայց երբ գործ ունեցաւ Լուկուլլոսի հետ,—այստեղ նրա բաղդի անիւր շուռ եկաւ:

Լուկուլլոսը ամենից առաջ կտրեց Միհրդատի զօրքի պաշարը և ապա երեք անգամ կռւի դուրս եկաւ նրա դէմ:

Առաջին երկու անգամը նա յաղթեց, բայց երրորդ անգամ այնպիսի կոտորած տւաւ Միհրդատի զօրքին, որ կենդանի մնացածները ցան—ցրիւ փախան՝ զուլնները ազատելու. ինքը Միհրդատն էլ անպատճառ թշնամիների ձեռքը կընկներ, եթէ չ'կարողանար նրանց մոլորեցնել. —նա իր գանձերը տանող ջորիներին նրանց առաջը քշեց, ձերքը ազահաբար ջորիներին բարձած հարստութիւնների վրան թափեցին, իսկ ինքը հազիւ—հազ փախաւ ծածկաբար և ազատուց: (70 թւականին):

Այստեղից նա Տիգրանի օգնութեանը դիմեց. Բայց զոռոզ Տիգրանը չուզեցաւ անգամ իր փեսայի երեսը տեսնել, այլ միայն հրամայեց, որ նրան պատսպարեն մի տեղ, որպէսզի թշնամիների ձեռքը չընկնի:

Այս ժամանակ Անտիոք քաղաքի Կղէոպատոսը թագուհին, որը իշխում էր ասորոց երկրի մի մասի վրայ—Տիգրանի դէմն է դրդում բոլոր ասորեստանցոց, սելևկացոց և Փիւնիկիայի քաղաքների բնակիչներին:

Այս բանը Տիգրանի ականջը ընկաւ և նա շտապելով այն կողմերը—հնազանդեցրեց ամենքին, ապա դիմեց սելևկեան բերդը, ուր փակւել



էր Կղէօպատրան Տիգրանի ահից։ Այստեղ ձերբակալեց նրան Տիգրանը և գլխատել տւաւ։

Հրէաների թագունի Աղեքսանդրան այս լուրից սարսափած՝ մեծամեծ ընծաներ է ուղարկում Տիգրանին և աղաչանք անում, որ իր ժողովրդին փրկաւ չ'հասցնէ։

Տիգրանը գովում է թագունու խելացիութիւնը և խոստանում է ոչ մի վատութիւն չանել։

Այս կողմերը շրջելու ժամանակ հայոց երկրից մի մարդ է գալիս Տիգրանի մօտ և յայտնում նրան՝ թէ Վայկուն անունով մի աւագակ սիդարացի զօրքերով ամրացել է Հայաստանի լեռներում և երկիրը ոտնատակ է տալիս։

Տիգրան շտապով հայաստան մտաւ և աւագակին իր խմբի հետ իսպառ ջնջեց։

Այն լեռները, ուր Վայկունը ամրացրել էր— նրա անունով կոչւեցան Վայկունիք։

Այս միջոցներին Լուկուլլոսը իր կնոջ եղբայր Ապպիոս Կղովղիոսին, որը մի նշանաւոր մարդ էր, — թղթով ուղարկում է Տիգրանի մօտ, որպէսզի նա Միհրդատին իր ձեռքը յանձնէ։

Ապպիոսը նախ գալիս է ասորոց մայրաքաղաք Անտիոք՝ կարծելով թէ Տիգրանը այնտեղ պէտքէ լինի. բայց նրան Անտիոքում չ'գտնելով— Տիգրանի գէմն է դրդում ասորոց Սարէն իշխանին և նրա հետ էլ ժողովրդից շատերին, որոնք դը-

գոն էին Տիգրանից—, ու հոովմայեցոց օգնութիւնը խոստանում։

Այստեղից Ապպիոսը դիմում է Հայաստան և այնտեղ տնելով Տիգրանին— Լուկուլլոսի թուղթը նրան է ներկայացնում և իր կողմից էլ յայտնում է շատ համարձակ լեզուով— որ եթէ Միհրդատը իրանց ձեռքը չ'յանձնւի— անմիջապէս պատերազմ կը բանան հայոց դէմ։

Տիգրանը կեանքում առաջին անգամ սլատահելով այսպիսի համարձակ մարդու — զարմանում է ինքն իր մէջ և պատասխանում նրան— թէ չի կարող իր փեսային նրանց ձեռքը տալ, քանի որ բարեկամի դէմ ալդպէս վարւելը դաւաճանութիւն կը համարւի. իսկ եթէ իրանց զօրավարը կուի պէտք է դուրս գայ իրեն դէմինքը պատրաստ է։

Ապպիոսը գնում է, իսկ Տիգրանը տաս հազար ձիաւոր զօրք տալով Միհրդատին— ուղարկում է Պոնդոս՝ պատերազմելու հոովմայեցոց դէմ— կարծելով թէ Լուկուլլոսը այնտեղ է։

Միհրդատին ուղարկելուց յետոյ Տիգրանի ակաջն է բնկնում ասորեատանցոց Սարէն իշխանի իր դէմ արած դաւադրութիւնը. նա շտապում է այնտեղ և Սարէնին իր ընտանիքի հետ պատժելով՝ հնազանդեցնում է բոլորին և Հայաստան յետ դառնում։

Այս միջոցին Լուկուլլոսը մտնում է հայոց



աշխարհը և դէպի Տիգրանակերտ քաղաքն է դիմում, ուր գտնուում էին հայոց թագաւորի գանձերը: մի հայ զօրավար շտապով Տիգրանի մօտն է գալիս և յայտնում նրան Լուկուլլոսի Հայաստան մտնելը: սակայն գոռոզ թագաւորը չուզեցաւ հաւատալ՝ թէ այդպիսի բան կարող է պատահել և լրաբերի խօսքերը խարդախութիւն համարելով—կախել տւեց նրան: Բայց երբ ստուգւեցաւ այս բանը—նա իր զօրավարներէից մէկին ուղարկեց Լուկուլլոսի առաջը կտրելու—հրամայելով՝ որ նրան կենդանի կամ մեռած իր մօտ բերէ: Հայ զօրավարը յաղթւեցաւ և սպանւեցաւ: Հռովմայեցիք պաշարեցին Տիգրանակերտը, որի միջի զօրքերը ներսից կուռւմ էին քաջութեամբ և այրող նիւթեր թափելով նրանց դիւին յետ էին քրշում պարիսպների մօտից և քաղաքը անվնաս պաշտպանում:

Տիգրանը զայրացած այս անյաջողութիւնից, 69 թւականին հաւաքում է զանազան ազգերից 26,000 զօրք և շտապում է թշնամիների վրա՝ Իրանից առաջ ուղարկում է 6000 ձիաւոր—պատւիրելով, որ շուտով ազատեն Տիգրանակերտի գանձերը և իրեն բերեն. սրանք ձեզքելով հռովմայեցոց զօրքի շղթան—քաղաք են մտնում և գանձերի մի մասը ազատում, բերում են Տիգրանին:

Լուկուլլոսը լսելով թէ Տիգրանը իր վրան

է գալիս,—առանց ժամանակ կորցնելու իր զօրքը 2 մասի բաժանեց, որից մի մասը—թւով 6000 զինւոր Մուրենաս զօրավարի իշխանութեան տակ թողեց, որոնցով նա շարունակէ քաղաքի պաշարումը: Իսկ ինքը վերցնելով 24 հազար զօրք և 1000 հոգի էլ աղեղնաւոր ու պարսաւոր զինւորներ—գնաց մի ընդարձակ դաշտում բանակ դրաւ:

Տիգրանը երբ մօտեցաւ նրա զօրքին և տեսաւ նրանց սակաւութիւնը—ծաղրելով բացականչեց.—Մխր ինչացու՞ են սրանք,—եթէ դեսպան են եկած ինձ մօտ—շատ են, իսկ եթէ կուլելու են եկել—շատ քիչ են: Ապա նա բոլորովին անհոգ մնալով—սկսեց զբօսանք անել, զօրքերն էլ իրանց համար խնձոյք սարքեցին:

Խորամանկ Լուկուլլոսը, որ այս ամենը տեսնում էր—յարձակւելու պատրաստւեց և իր զօրքին քաջալերեց ասելով—,Մնեքիկիւզ եղէք և աւարի ուշք մի դարձրէք, որպէսզի ցրւենք հայոց այդ մեծ ուժը:

Ապա նրանք կազմ—պատրաստ ընկան հայոց զօրքերի վրայ և խառնաշփոթութեան ձգեցին նրանց մէջ: Տիգրան այս անսպասելի դէպքը տեսնելով՝ հրամայեց յետ նահանջման փողերը փչեն և այսպէս առանց պատերազմ տալու վերադարձաւ կուի դաշտից: Հռովմայեցիք աւելի սիրտ առած իրենց այս յաջողութիւնից՝ նախ



ընկան հայոց զօրքերի յետևից — կոտորած տալով նրանց, յետոյ շտապով վերադարձան դէպի Տիգրանակերտ, ուր սպասում էր նրանց Մուրե-նաս զօրավարը:

Քաղաքն առնւեցաւ միջի յոյն զօրքերի մատնութեամբ և Լուկուլլոսը այնտեղի հարստութիւնը բաժանեց իր զօրքի վրայ — բոլորին էլ առատ բաժին տալով:

Տիգրանը նոր բանակ կազմեց և դուրս եկաւ թշնամիների դէմ: Այս անգամ երկու կողմէն էլ շատ ուժեղ կուսեցան իրար դէմ. բայց Լուկուլլոսի զօրքը այնքան երկար պատերազմներից այնպէս թուլացել էր, որ էլ կարողութիւն չունեցաւ այլևս շարունակելու Տիգրանի դէմ սկսած կռիւը. նրանք մեծ փնասներ կրելով յետ դարձան և գնացին Միջագետքի Մծբին քաղաքը պաշարեցին, որը Տիգրանի եղբայր Գոռի պաշտպանութեան տակն էր գրանւում. ամբողջ ամառը կուսեցան, բայց չ'կարացին տիրել քաղաքին. միայն աշնանը՝ մի մութ ու անձրևային գիշեր, երբ քաղաքի պահապանները վստահացած իրանց ամուր պարիսպների վրայ — անհոգ նստել էին տեղներումը — հռովմայեցիք սանտուխներով վեր բարձրացան և առաջին պարսպին տէր դարձան: Գոռ տեսնելով, որ էլ իզուր է դիմադրելը — խոստացաւ անձատուր լինել և երգում առաւ Լուկուլլոսից, որ քաղաքացիներին

վնաս չհասցնէ.

Տիգրան այս անլաջողութիւններից գալըացած՝ Միհրդատին սպարապետ նշանակեց իր զօրքերի վրայ և շատ զէնքի գործարաններ բանալով՝ նոր զէնքեր պատրաստել տաւ, յետոյ հաւաքեց իր ամբողջ զօրքը և խիստ ընտրութիւն կատարեց. 70,000 ոտաւոր և 45,000 ձիաւոր ջոկելով՝ նա յանձնեց Միհրդատին, որ վարժեցնի նրանց հռովմայեցոց զինուորների ձևով:

Սրանից յետոյ Միհրդատին մեծ զօրքով ուղարկեց թշնամիների դէմ, որը անցաւ փոքր — Սսիայի կողմերը և մէկ-մէկու յետևից մի շարք երկրների տիրելով — այնտեղեցից մեծ կոտորածով դուրս հալածեց հռովմայեցոց զօրքերը՝ ապա վերադարձաւ Փոքր Հայք և այստեղից էլ նրանց զօրքը դուրս արաւ. յետոյ դուրս տանել տաւ փոքր — Հայքի պաշարի մեծ մասը, իսկ մնացածն էլ այրել տւեց, որ Լուկուլլոսի զօրքը այս կողմը անցնելիս սովի մատնւի:

Այդ միջոցներին Լուկուլլոսի զրութիւնը շատ յուսահատական էր. նա երկու անգամ յաղթեց Միհրդատից և Տիգրանից, ու վերջն էլ մտածեց յարձակւել Տիգրանի վրայ. բայց նրա զօրքը ապստամբել էր իր դէմ և բոլորովին չուզեց լսել նրա աղաչանքներին ու խրատներին՝ կռիւը շարունակելու:



Այսպիսով յաղթութիւնը դարձեալ Տիգրանի ու Միհրդատի կողմը մնաց: Տիգրանը նորից տէր դարձաւ Հայաստանի արեւմտեան կողմը գտնուող այն երկրներին, որոնք հռովմայեցիք վերջերը խեցին հայերից. իսկ Միհրդատն էլ ձեռք բերեց Փոքր Ասիայում մեծ մասը այն երկրներին, որոնց նա տիրել առաջ:

Այսչափ անյաշնոթութիւններէից յետոյ հռովմայեցիք խիստ վրդովւել սկսան, քանի որ աշխարհի ամենաուժեղ ազգն էին նրանք այդ ժամանակ և ամօթ էր իրանց անւան այդքան կրած պարտութիւնները. նրանք մեծամեծների ժողով գումարեցին, որը Ծերակոյտ էր կոչւում. այս Ծերակոյտում նրանց հռչակաւոր ճառախօս կիկերոնը մի ազդու ճառ արտասանեց, որով համոզում էր Ծերակոյտին—Տիգրանի ու Միհրդատի դէմ երիտասարդ զօրավար Պոմպէոսին ուղարկել Լուկուլլոսի փոխարէն: Ամենքը հաւանեցին Կեկերոնի առաջարկին, բայց Պոմպէոսը դժարանում էր այս ծանր գործը յանձն առնել. Սակայն ամեն կողմից համոզելով և ստիպելով՝ նրան խօսքի բերին և ուղարկելիս պատիրեցին՝ որ կամ վերջնականապէս յաղթէ Տիգրանին ու Միհրդատին, և կամ հաշտութիւն կայացնէ նրանց հետ:

Պոմպէոսը արշաւեց Կապադովկիա և այնտեղ մի ճակատամարտ տալով Միհրդատի դէմ—անցաւ փոքր-Հայք: Այստեղ երկար ժամանակ

կանգ առաւ և վերջը զօրքի մի մասի հետ դարան մտնելով-մոլորեցրեց Միհրդատին և յանկարծակի նրա զօրքերի վրայ ընկնելով՝ սաստիկ ջարդ տւեց և ցիր ու ցան արաւ բոլորին: Միհրդատ պատերազմի դաշտից փախչելով՝ կրկին Տիգրանին դիմեց, բայց գոռոզ Տիգրանը այս անգամ էլ նրան չընդունեց. սակայն նա չյուսաւ հատեց և անցաւ Հայաստանի հիւսիսային կողմը ու այստեղ սկիւթացիներէից նոր զօրք կազմելով՝ կրկին դիմեց հռովմայեցոց վրայ. մի քանի յաղթութիւններէից յետոյ նա մտածեց հիւսիսային երկրներով անց կենալ, մտնել հռովմայեցոց բուն աշխարհը և այնտեղ կռիւ սկսել նրանց հետ. բայց զօրքերը վախեցան նրա այս յանդուգըն մտքից և այլևս չուզեցան կռիւը շարունակել. ալս միջոցին Միհրդատի Փառնակէս որդին էլ ապստամբեց հօր դէմ: Այսպէս ամեն կողմից էր շրջապատւելով թշնամիներից—նա փախաւ և մի շրջապատւելով թշնամիներից—նա փախաւ և մի շրջապատւելով թշնամիներից, որը շուտով պաշարեցին բերդում պատսպարւեց, որը շուտով պաշարեցին հռովմայեցիք. նրանց ձեռքը կենդանի չընկնելու համար—նա այստեղ սուրբ իր կուրծքը ցցեց և մեռաւ 64 թւականին Քրիստոսի ծննդից առաջ:

Տիգրան երբ լսեց Միհրդատի ցաւալի վախճանը—նոր միայն զգաց, թէ ինչպիսի մեծ սխալ գործեց՝ իր քաջ դաշնակից փեսային անպաշտպան թողնելով, և մեծ սուգ արաւ նրա վրայ: Պոմպէոսը Փոքր Հայքում Միհրդատին



յաղթելուց յետոյ, էլ աւելնորդ համարեց նրա յետեիցն ընկել. այլ առանց ժամանակ կորցնելու նա դիմեց Տիգրանի վրայ: Երբ Մեծ—հայք մտաւ նրան եկաւ—միացաւ Տիգրանի որդի Տիգրանը, որը ապստամբել էր հօր դէմ և պարսից Որոգէս թագաւորի հետ միաբանել էր:

Տիգրանն էլ, Միհրդատի նման, իրան պաշարւած տեսնելով դրսի ու ներսի թշնամիներով՝ ճարտհատւած հաշտութիւն խնդրեց Պոմպէոսից և հետը վերցնելով շատ թանկագին ընծաներ՝ անձամբ նրա բանակը գնաց: Պոմպէոսը թագաւորին արժանաւարել կերպով ընդունեց Տիգրանին և նրա հետ հաշտութեան դաշն կապեց: Այս դաշնագրութեան համաձայն՝ Տիգրանը ձեռք բաշեց իր հետևեալ երկրներէց.—այն է՝ Պաղատիայից, Կապադովկիայից, Կիլիկիայից, ասորոց երկրից և Փիւնիկիէից, որոնք դարձան հռովմայեցոց նահանգներ: Փոքր—հայքի մի—քանի գաւառներն էլ առանձին—առանձին տէրութիւններ կազմեցին իրանց տեղացի թագաւորներով, որոնք պէտք է գտնւէին հռովմայեցոց պաշտպանութեան տակ: Տիգրանին մնաց ամբողջ Մեծ—Հայքը և Հայոց Միջագետքը. միայն Մեծ—Հայքի Կորդւաց և Ծոփաց նահանգները Տիգրանի համաձայնութեամբ Պոմպէոսը Փոքր—Տիգրանին տւեց. բայց սա զժգոհ մնաց Պոմպէոսից, որովհետև յոյս ունէր, թէ նա իրեն պէտք է տար հօր թագա-

ւորութիւնը. այս պատճառով ծածուկ կապւեց պարթևաց թագաւորի հետ—ապստամբելու Պոմպէոսի դէմ. բայց այս դաւադրութիւնը բացւեց և Պոմպէոսը շղթայակապ անելով նրան՝ պահեց իրեն մօտ՝ որպէս մի զարդ իր յաղթանակի համար:

Պոմպէոսի հետ կապած դաշինքը Տիգրանը չէր համարում մի վերջնական որոշում. նա միայն կամեցաւ դրանով մի առժամանակ հանդարտացնել հռովմայեցոց, որ միջոց ունենայ իր ուժերը նորոգելու: Նա իր Արտավազդ որդուն Այրարատեան աշխարհի վրայ թագաւոր նշանակեց, իսկ ինքը պատրաստւեց պատերազմի դուրս գալ:

Այդ միջոցներին Պոմպէոսի տեղը եկաւ Գաբիանոսը, որը արշաւեց ասորոց երկրի վրայ—հնազանդեցնելու նրան: Տիգրանը լսելով Պոմպէոսի հեռանալը—ինքն էլ ասորոց վրայ արշաւեց—պատերազմ տալու Գաբիանոսի դէմ. բայց սա վախենալով հայոց թագաւորի ուժից, նրան թողեց Ասորեստանը և ինքը գնաց Եգիպտոսը պաշտպանելու թշնամիներից. Տիգրանի հետն էլ ծածուկ հաշտութիւն արաւ և նրան յանձնեց Միհրդատի որդի Փոքր Միհրդատին, որին Պոմպէոսը գերի էր վերցրել հօրն յաղթելու ժամանակ: Իսկ այս բաները Ծերակոյտից ծածկելու համար—հրատարակեց Գաբիանոսը—թէ Փոքր



Միհրդատին հռովմայեցի զօրավարներն են փախ-  
ցրել: Յետոյ այս բանը պարզւեց և Գաբիանոսին  
իշխանութիւնից քցեցին:

Գաբիանոսի տեղ եկաւ Կասիոսը, որը մի  
ազաճ և անշնորհք մարդ էր. — նա մտածում էր,  
որ ասորոց, հայոց և պարթևաց երկրներին տի-  
րելով — շատ հարստութիւն պէտք է ղէպէ: Նախ  
եկաւ նա Ասորեստան և այստեղից մեծ զօրք  
հաւաքելով՝ միացրեց իր բանակին. յետոյ շարու-  
նակեց առաջ արշաւել — ղէպի հայոց ու պարսից  
աշխարհները: Նրա զօրավարներից շատերը վար-  
ձով գիտէին պարսից ու հայոց ուժը, ուստի  
խորհուրդ տւեցին նրան՝ մի քանի ժամանակ  
յետաձգել այս արշաւանքը և ամեն հանգամանքի  
հետ լաւ ծանօթանալ. ցայց Կրասոսը ոչ մի  
խորհուրդ չուզեցաւ լսել — մեծ յոյս ունենալով  
հռովմայեցոց զօրքի քաջութեան վրայ: Այդ  
ժամանակ նրան յորդորում էր հռովմայեցոց հըռ-  
շակաւոր զօրավար Յուլիոս Կեսարը Գաղատի-  
այից՝ որ յետ չ'կանգնի իր արշաւանքից: Այս-  
պէս առաջ գնալով՝ նա ճանապարհին մտաւ  
Հրէաստան և յափշտակեց Նրուսաղէմի տաճարի  
գանձերը. այստեղից էլ առաջնալով անցաւ  
Հայաստանի սահմանը, եփրատ գետի վրայ կա-  
մուրջ ձգել տւեց և միւս կողմն անցաւ զօրքերի  
հետ: Այստեղ նա տիրեց մի քանի նահանգների,  
բայց ձմեռը վրայ հասնելու պատճառով չ'կարո-

ղացաւ այլևս առաջ գնալ և յետ դարձաւ Ասո-  
րեստան, որտեղ եկաւ Նրան միացաւ իր համա-  
նուն Կրասոս որդին Յուլիոս Կեսարի ուղարկած  
զօրքով: Ապա հայր ու որդի մի անագին պատ-  
րաստութիւն տեսնելուց յետոյ — ընտրովի զօ-  
րավարների հետ ղէպի Միշագետք ղիմեցին, ուր  
գտան երկրի կողմերին ծանօթ մի տեղացի  
մարդ. սա առաջնորդել սկսեց նրանց կարճ  
ճանապարհներով ղէպի պարսից ու հայոց աշ-  
խարհների կեդրոնը, բայց Կրասոս չուզեց հա-  
ւատ ընծայել այս մարդուն և նրա ցոյց տա-  
ւած ընծայել առաջ գնալ, այլ ընկնելով  
լեռնոտ տեղերով առաջ գնալ, — իր զօրքերին  
ամայի և ընդարձակ դաշտերը, — իր զօրքերին  
գնդերի բաժանեց, որոնք միանցից բաժան-բա-  
ժան և հեռու ընկած՝ առաջ էին շարժու-  
մ:

Մինչդեռ հայոց ու պարսից աշխարհներն  
էր մտնում Կրասոսը — Տիգրանը պարսից Որոգէս  
թագաւորի հետ արդէն ամեն պատրաստութիւն  
տեսած էր՝ նրանց ղէպն առնելու համար:  
Հայոց և պարսից այս միութիւնը անա այսկերպ  
էր կազմւել. այդ ժամանակ Տիգրանը ծեր էր,  
համարեա, և իր երկրի ուժն էլ շատ թուլացել  
էր. այս բաները աչքի առաջ ունենալով — նա  
զգաց, որ էլ անկարող է թշնամիներին ղիմա-  
ղել, ուստի նախազանութեան պատիւը յօժա-  
բուկամ պարսից Որոգէս թագաւորին յանձնեց.  
իսկ իրանց այս բարեկամութիւնն էլ որպէսզի



սերտ պահպանելի—իր աղջկան կնութեան սուաւ Որոգէսի Բակուր որդուն. ապա պարսից ու հայոց զօրքերի վրայ հրամանատար նշանակեցաւ Սուրէն զօրավարը, որը պարթևաց թագաւորների թագադիր իշխանն էր:

Սուրէնը Կրասոսի զօրքին հասնում է այն ժամանակ, երբ նրանց գնդերը իրարուց հեռու հեռու ընկած՝ առաջ էին շարժւում. այստեղ նա իր զօրքի մի մասին դարան դրաւ, իսկ միւս մասով յարձակւեց Կրասոսի յետին գնդերի վրայ և մի զարհուրելի խառնաշփոթութիւն ձգեց նրանց մէջ.—երբ այս յետևի կոտորուող գնդերը լուր էին հասցնում Կրասոսին թշնամիների յարձակման մասին—այդ միջոցին Սուրէնի դարան մտած զօրքը դուրս եկաւ և միանալով կրուող մասի հետ—չորս կողմից շրջապատեցին հռովմայեցոյց և սկսեցին կարկառի նման նետեր տեղալ նրանց գլխին:

Կրասոսը տեսնելով—որ թշնամին չորս կողմից փաթել է իրանց շուրջը և էլ ուրիշ ազատւելու հնար չկայ—յորդորեց իր որդի Փոքր Կրասոսին, որ ձեղքի նրանց զօրքը և առաջ անցնի: Խորամանկ Սուրէնը երբ տեսաւ նրանց այս աշխատանքը—դիտմամբ յետ դարձրեց և փախչել հրամայեց իր զօրքի մի մասին. Փոքր-Կրասոսը սրտապնդւած՝ յարձակւեց նրանց յետևից. բայց երբ բաւական հեռացած էին ճակատա-

մարտի տեղից—Սուրէնի զօրքերը յետ դարձան և նրան մէջ առած սաստիկ ջարդ տւեցին նրա զօրքին. թշնամիների ձեռքը չընկնելու համար—Փոքր-Կրասոսը ինքն իրան սպանեց. Սուրէնի զինւորները կարեցին նրա գլուխը և նետի ծայրին ցցած—վեր բարձրացրին ու այսպէս դէպի հօրը տարան:

Կրասոսը իր որդու այս եղեռնական մահը երբ տեսաւ, դառնացած լաց եղաւ. ապա ինքն էլ յաղթւելով իր զօրքերի հետ՝ փախուստ տւեց, որպէսզի չընկնի թշնամիների ձեռքը:

Սուրէն ընկած նրա յետևից՝ մեծ նեղութիւններ տւեց. վերջն էլ, կեղծօրէն, յայտարարեց, թէ ուզում է նրա հետ հաշտել ու իր բանակը հրաւիրեց. Կրասոսը չուզեց հաւատալ և գնալ. բայց նրա զօրավարները համոզելով ու ստիպելով՝ ուղարկեցին նրան Սուրէնի բանակը՝ երկու կողմի զինւորներով շրջապատւած: Ծառապարհի կէսին դաւադրութիւնը բացւեց և կռիւ սկսւեց, որի ժամանակ Սուրէնի զինւորները մէկը սպանեց Կրասոսին: Սուրէն կտրեց նրա ձեռքն ու գլուխը, և ապա հաւաքեց պատերազմական ահազին աւար, որոնց մէջ էին երուսաղէմի տաճարից և շատ կռտաներից Կրասոսի կողոպտած հարստութիւնները: Այս բոլորը նա Տիգրանի արքունիքը ուղարկեց 53 թւակաւին: Այս ժամանակ Տիգրանի մօտն էր եկել



պարսից Որոգէս թագաւորը՝ իր Բակուր որդու հարսանիքը անելու:

Հռովմայեցոց այս պարտութեան լուրը առնելով—շատ ազգութիւններ փորձեցին դուրս գալ նրանց իշխանութեան տակից. բայց կրասոսի տեղ շուտով նշանակեցաւ Կասիոսը—Տիգրանի առաջն առնելու համար: Կասիոսը հաւաքեց հռովմայեցոց ցրած զօրքերը, անցաւ Ասորեստան և բոլորին հնազանդեցնելուց յետոյ, պատրաստեց Տիգրանի վրայ արշաւել: Նրան ղեմադրելու համար Տիգրանը իր խնամի Որոգէս թագաւորից օգնական զօրք խնդրեց: Որոգէսը Բակուրի հետ ուղարկեց նրան հարկաւոր զօրքը:

Տիգրանը, որ հիմա արդէն ծեր էր, ինքը չկարողացաւ պատերազմ գնալ, ուստի Ռըշտունեաց Բազափրան նախարարին սպարապետ նշանակեց զօրքի վրայ և 51 թւականին Քրիստոսի ծննդից առաջ, ուղարկեց նրան Կասիոսի դէմ—ասորոց ու պաղեստինացոց կողմերը. պատուիրեց նրան նոյնպէս, որ քաղձրութեամբ վարւի տեղական ժողովրդների հետ: Բազափրան անցաւ վերին Միջագետքով և տիրեց փիւնիկեցոց ու ասորոց երկրներին:

Նրա դէմ ելաւ հռովմայեցոց Անտոնիոս զօրավարը, բայց առանց կռիւ յետ դարձաւ, որով հետև պատերազմի համար բաւականաչափ պատրաստութիւն չունէր: Այստեղից Բազափրանը

առաջ անցաւ, Անտիոք քաղաքի մէջ պաշարեց Կասիոսին և նրան շատ նեղ դրութեան մէջ դրաւ. բայց հռովմայեցոց հռչակաւոր զօրավար Վիկեթրոնը, որը այդ տարի Կիլիկիայի վրայ հիւպատոս էր նշանակւել—Կասիոսին օգնութեան հասաւ և նրան Բազափրանի ձեռիցը ազատեց: Սրանից յետոյ երկար կռիւներ եղան. բայց վերջը Բազափրանը յաղթեց հռովմայեցոց և մեծ ջարդ տալով նրանց՝ զօրքի մի մասին դէպի ծովը հալածեց, իսկ միւսին՝ դէպի ամուր քաղաքները փախցրեց:

Հալոց զօրքի այս յաջողութիւնները տեսնելով՝ Բազափրանին ղեմեց հրէաների Հիւրկանոս քահանայապետի եղբոր որդի Անտիգոնոսը և խոստացաւ նրան հաղար քանքար ոսկի տալ, եթէ իրան հրէաների վրայ թագաւոր դնէ իր հօրեղբայր Հիւրկանոսի փոխարէն:

Բազափրանը ընդունեց Անտիգոնոսի խնդրը, ու յետոյ իր զօրքը 2 մասի բաժանեց: Մէկ մասը տւեց Բակուրին և ուղարկեց Հրէաստան՝ Հիւրկանոսի դէմ կռւելու, իսկ միւս մասը ինքը վերցրեց և Միջերկրական ծովի ափը գտնուող հռովմայեցոց երկրների վրայ յարձակւելով՝ այնտեղերից հալածեց նրանց զօրքերը և մինչև Իկոնիա. ապա վերադարձաւ Հրէաստան, ուր Բակուրը պաշարել էր Երուսաղէմը և կռւում էր հրէաների հետ:



Հիւրկանոսը երբ իմացաւ Բագափրանի գալուստը—մարդ ուղարկեց նրա մօտ՝ հաշտութիւն խնդրելու։ Բագափրանը առ երես ցոյց տւեց, որ ուրախ է այս առաջարկութեանը, և այսպիսով կամեցաւ նրան թակարդի մէջ գցել։ Նա Գնէլ Գնունուն մի գունդ ձիաւոր զօրքով ուղարկեց Հիւրկանոսի մօտ իբր թէ նրա հետ բարեկամական տեսակցութիւն անելու, բայց, ճշմարիտն ասած՝ նրան գահից գցելու և Անտիգոնոսին թագաւորեցնելու նրա փոխարէն։

Հիւրկանոսը զգաց, որ հայ զօրավարը իր հետ խարդախութեամբ է վարւում և թոյլ չտւեց նրա ուղարկած ամբողջ զօրքին քաղաք մտնել. բայց մտածելով՝ որ իր այս վարմունքովը շատ կը բարկացնէ նրան՝ իր մօտ ընդունեց Գնէլի հետ 500 ձիաւոր։ Գնէլը այսչափ զօրքով չէր կարող իրեն տւած պատւէրը կատարել, ուստի համոզել սկսաւ Հիւրկանոսին, որ առանց երկիւղի Բագափրանի մօտ երթայ՝ հաշտութիւն կայացնելու համար. իրեն կողմից էլ խոստացաւ նրա բարին խօսել իր մեծի առաջ։

Հիւրկանոսը այստեղ էլ չուզեց հաւատալ հայ զօրավարների անկեղծութեանը և խնդրեց Բագափրանից, որ նախ երդւի՝ թէ ղեպչելու չէ իր գահին։

Բագափրանը երդւեց արեւով, լուսնով, պարթևաց թագաւորների պաշտամունքով և, վերջա-

պէս, Տիգրան ու Որոդէս թագաւորների գլխով։ Սրանից յետոյ Հիւրկանոսը վստահացած՝ գնաց Եփեսոս գիւղը, ուր սպասում էր նրան Բագափրանը. սկզբում նա Հիւրկանոսին մեծ պատիւներ ցոյց տւեց, բայց յետոյ ինքը հեռացաւ և պատւիրեց զօրավարներին՝ շղթայել նրան, որից յետոյ Անտիգոնոսին թագաւորեցրեց Երուսաղէմի վրայ և Հրէաստանից շատ աւար ու գերի վերցրեց։ Այնուհետև պահապան զօրքեր թողեց Ստրեստանում և Կիլիկիայում, Բակուրին էլ յանձնեց Միջագետքի պահպանութիւնը, և թողնելով նրա մօտ Գնէլին ու շատ զօրք, — ինքը ղէպի Տիգրանը գնաց՝ տանելով իր հետ հաւաքած աւարը և հրէա գերիներին, որոնց մէջն էր Հիւրկանոս քայանայապետը։ Տիգրանը այս ղերիներին բնակեցրեց Վան քաղաքում։

Երուսաղէմը վերցնելու ժամանակ Հիւրկանոսի փոխանորդ Հերովդէսը փախաւ ափսոսելից և հռովմայեցոց օգնութեանը դիմեց, որոնք Վենդիդիոս զօրավարին ուղարկեցին հայոց ու պարսից վրայ։

Վենդիդիոսը նախ ասորոց երկիրը արշաւեց և ափսոսելից հալածեց Բագափրանի թողած զօրքերին, յետոյ Սիդոն զօրավարին թողեց Եփեսոս մօտ, որ թշնամիների առաջն առնի, իսկ ինքը գնաց Երուսաղէմ՝ պատժելու Անտիգոնոսին. Եփեսոսը պաշարեց, բայց չկարողացաւ տիրել։



Այս միջոցին Բակուրը յարձակեցաւ Սի-  
դոնի վրայ, յաղթեց նրան և Հրէաստան հալա-  
ծեց. յետոյ էլ կուրս դուրս եկաւ Վենդիդիոսի  
դէմ, բայց յաղթեցաւ ու սպանեց:

Այս ժամանակներուն էր, որ մեռաւ Տիգ-  
րանը 53 տարեկան հասակում և իր աթոռը  
թողեց Արտաւազդ որդուն:

Սրա օրով Հայաստանը թուլացել և քայքայւել  
էր իր հօր ու պապի անքան անտեղի պատե-  
րազմների պատճառով, որոնք մեծ փրսս և աւեր-  
մունք բերին աշխատաւոր ժողովրդի համար.  
ուստի հիմա հարկաւոր էր հայոց աշխարհին մի  
խելացի և հեռատես թագաւոր, որը ձեռք քաշէր  
կորստաբեր պատերազմներից և Վազարշակի ու  
Արշակի նման նւիրէր երկրի ներքին բարեկար-  
գութեան և ժողովրդին դուրս բերէր իր ներ-  
կայ կացութիւնից:

Արտաւազդը այսպիսի մեծ գործերի անըն-  
դունակ էր. նա ի ծնէ զւարճասէր բընաւորու-  
թիւն ունէր և աւելի սիրում էր որսորդութեամբ  
և կեր ու խումով պարապել,— քան թէ երկր-  
կարեքների վրայ մտածել:

Հռովմայեցիք Պարսկաստանին և Հայաստա-  
նին բորովին տէր դառնալու համար— ուղարկե-  
ցին Անտոնիոս զօրավարին, որը եկաւ ասորո-  
կողմերը և այնտեղից անցնելով Միջագետք՝ մ

քանի փոքր կռիւներ արեց, ապա վերադարձաւ  
Եգիպտոս. Կղէոպատրա թագուհու մօտ, որով-  
հետեւ ձմեռը վրայ էր հասել և միւս կողմից էլ՝  
նրան կանչել էին Հռովմից:

Նրա հեռանալուց յետոյ հայ զօրքերը բողո-  
քել սկսան Արտաւազդի դէմ, որ նա անշարժ  
նստել է իր տեղը, իսկ հռովմայեցիք տէր են դար-  
ձել Միջագետքին: Արտաւազդը երբ տեսաւ, որ ճար-  
ձել Միջագետքին: Արտաւազդը երբ տեսաւ, որ ճար-  
չունի այս բողոքներից ազատելու,— զօրք հա-  
ւաքեց և արշաւելով Միջագետք՝ յետ խլեց հռով-  
մայեցիներից իր երկրները:

Այս միջոցին մեռաւ պարսից Որոդէս թա-  
գաւորը, որի մահւան լուրն առնելով Անտոնի-  
ոսը ուրախացաւ և հիմա, աւելի յարմար միջոց  
համարեց՝ պարսից վրայ գնալու: Նա շուտով  
Հայաստանի սահմանին մօտեցաւ, որից Արտա-  
ւազդը սարսափած՝ շտապեց հաշտութիւն անել  
նրա հետ և խոստացաւ օգնական զօրք տալ նրան,  
բայց ծածուկ խօսք մէկ արեց պարսից նոր թա-  
գաւոր Հրահատ Դ-ի հետ՝ թակարդի մէջ քցելու  
Անտոնիոսին: Միւս կողմից էլ հռովմայեցոյ զօրա-  
վար Օկտաւիանոսն էր թշնամացել իր ընկեր Ան-  
տոնիոսի դէմ և Արտաւազդին ծածկաբար նրա  
հակառակն էր դրդում:

Անտոնիոս ոչ մի կասկած չը տարաւ Արտա-  
ւազդի վրայ և նրան իր զօրքին առաջնորդ և  
պատերազմական գործերին էլ խնամատար ընտ-



րեց։ Այնուհետև Արտաւազդը երկար ժամանակ նրա զօրքերին զուր ման ածելուց յետոյ—ինքը մի պատճառ գտաւ և հեռացաւ՝ խոստանալով, որ շուտով կը վերադառնայ։

Անտոնիոսը տեսնելով՝ թէ Արտաւազդը իրան խաբեց—չկամեցաւ յետ դառնալ պարսից արշաւանքից, թէև տարւայ լաւ եղանակները անցել էին. նա իր զօրքը երկու մասի բաժանեց, որոնցից մի մասը տւեց Ուպլիոս զօրավարին և ուղարկեց մարաց դէմ կռուելու, իսկ միւս մասով ինքը առաջ գնաց պարսից դէմ։

Ուպլիոսին յանձնած զօրքը շուտով յաղթեց թշնամիներից, ինքն էլ ամեն տեղ նեղւելով սովից և կոտորած կրելով պարսից զօրքից՝ ճարահատւած յետ դարձաւ։ Այստեղից մինչև Արաքսի ակունքները պարսիկները սոսկալի ջարդ ու նեղութիւն տւեցին նրանց. այնպէս որ երբ Արաքսին հասան, ուրիշ ճար չգտնելով՝ բոլորը ջուրը թափւեցին, որ միւս ավին անցնին և պարսիկներից ազատին։

Ջրից դուրս գալուց յետոյ Անտոնիոսը համարելով իր զօրքը, տեսաւ, որ 24,000 մարդ է կորցրել։ Այստեղ բոլորը վրէժով լցւած կամեցան Արտաւազդի վրայ գնալ. բայց Անտոնիոսը չլսեց նրանց, որովհետև էլ ուժ չէր ֆնացել իր զօրքի մէջ և թողեց, որ յետոյ հաշիւ տեսնէ նրա հետ. հիմա նա իրեն բարեկամ ձեացրեց Արտաւազդին

և նրանից հանդերձ ու պաշար ստացաւ իր զօրքի համար. ապա գնալով Եգիպտոս Կղէոպատրայի մօտ—պատմեց ամենքին, որ ինքը յաղթել է պարսից։ Այնուհետև նա ամեն տեսակ հնարներով աշխատեց ձեռք քցել Արտաւազդին. —յայտարարեց, որ նրա հետ ուզում է բարեկամ դառնալ՝ իր աղջիկը նրա որդուն կնոթեան տալ և կամ թէ իր Աղէքսանդր որդուն ամուսնացնել է ցանկանում նրա աղջկայ հետ, —և ուրիշ այսպիսի շատ առաջարկներ ու խոստումներ. բայց Արտաւազդը չհաւատաց նրա ոչ մի խօսքին և չգնաց նրա մօտ։ Վերջը նա զօրք առած Հայաստան մտաւ և մէկ քաղձրութեամբ, մէկ սպառնալիքով իր մօտ բերեց Արտաւազդին ու հետը վերցրած ման ածեց նրան Հայաստանի բոլոր բերդերը, որպէսզի այնտեղերի հարըստութիւնները ձեռք քցէ։ Նա ամեն տեղ յայտնում էր, որ այդ հարստութիւնները հայոց աշխարհի կարիքների համար պէտք է գործադրէ. բայց բերդապահ զօրքերից ոչ-ոք չհաւատաց նրա խօսքերին և թոյլ չ'տւեցին ներս մտնել։ Այստեղերից յոյսը կտրած՝ նա ստիպմունք բանեցրեց Արտաւազդի վրայ և իմանալով նրա սեփական գանձերի տեղը—յափշտակեց։ Ապա նրան կոպեց ոսկէ շղթաներով և բոլոր ընտանիքի հետ տարաւ Եգիպտոս ու պարգևեց Կղէոպատրա թագուհուն. սա Արտաւազդի հօր՝ Տիգրանի թշնամին



էր, որովհետեւ նա գլխատեց իւր մայր Կղէոպատրային. այս պատճառով էլ Կղէոպատրան երկար ժամանակ պահեց Արտաւազդին բանդի կապանքներէ մէջ և վերջը գլխատել տալով—գլուխը ուղարկեց Մարաց Թագաւորին, որը Արտաւազդի ոխերիմ թշնամին էր:

Արտաւազդից յետոյ հայոց համար սկսուեմ է մի ծանր և խառնակ դրութիւն, որը տևում է մեր պատմութեան ամբողջ ընթացքում, որովհետեւ Հայաստանը ընկաւ երկու իրարու թշնամի և զօրեղ տէրութիւնների—այն է՝ պարսից ու հռովմայեցոց մէջ, և սրանից յետոյ եկող հայ թագաւորները կամ պէտք է անցնէին այս երկու տէրութիւններից մէկն ու մէկի կողմը և միւսին իրանց հետ թշնամանացնէին և կամ պէտք է կուէին այդ երկուսի հետ էլ միաժամանակ, որը շատ բարձր էր նրանց ուժերից: Սրանից զատ Հայաստանի վրայով էին արշաւում, անց-կենում բոլոր այն վայրենի և բարբարոս ցեղերը, որոնք ամեն-տեղ կրակ ու աւեր էին տարածում, որպէսզի ձեռք բցեն ամբողջ աշխարհի իշխանութիւնն ու հարստութիւնը. իսկ այս բոլորի հետեանքը լինում էր հայոց աշխարհի աւերումը և միլիօնաւոր անմեղ հայ ժողովրդի կոտորածը, որոնք իրանց արիւնով ներկում էին Հայաստանի գաշտերն ու ջրերը:



Լորս եւ սեռիկ Սմբատ Իւզբաշի

Հետեւեալ աշխատութիւնները

- 1) Սիւրոյ ու տանջանքի յուշերից  
(ոտան. Ա. պրակ) 1909 թ. Ալէքս.  
գրողօլ-սպար
- 2) Մօրաքրոջս զրոյցը  
(պատմածք) 1911 թ. Բագու-սպար
- 3) Ժողովրդական հրգարան  
(Բանաստեղծութ.) 1911 թ. Բ.  
գին

Պատրաստ է տպագրութիւն

„Ռեկուսիտ“ ըստ արդարութիւն

Վ. Է. Պ. Ը



4582

0000759

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0000759



